ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 հունիսի 2023 թվականի N 1056-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 27-Ի N 75-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի «Կախված տեղանքի առանձնահատկություններից՝ յուրաքանչյուր ջրավազանային կառավարման տարածքի ջրի որակի ապահովման նորմերը սահմանելու մասին» N 75-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) վերնագրում «ՋՐԻ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ» բառերը փոխարինել «ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ ՋՐԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՋՐԻ ՈՐԱԿԻ» բառերով:

2. Որոշման՝

1) նախաբանը «Համաձայն» բառից հետո լրացնել «Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքի 68.1-ին հոդվածի 1-ին մասի և» բառերով.

2) 1-ին կետի՝

ա. 1-ին ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«1) Հայաստանի Հանրապետության մակերևութային ջրային մարմինների կարգավիճակների ջրի որակի նորմերը՝ ըստ հիդրոմորֆոլոգիական տարրերի՝ համաձայն N 1 հավելվածի.»,

բ. 2-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«2) Հայաստանի Հանրապետության մակերևութային ջրային մարմինների կարգավիճակների ջրի որակի նորմերը՝ ըստ ֆիզիկաքիմիական տարրերի՝ համաձայն N 2 հավելվածի.»,

գ. 2-րդ ենթակետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.1-ին ենթակետով՝

«2.1) Հայաստանի Հանրապետության մակերևութային ջրային մարմինների կարգավիճակների ջրի որակի նորմերը՝ ըստ կենսաբանական տարրերի՝ համաձայն N 2.1 հավելվածի.»,

դ. 3-12-րդ և 12.2-25-րդ ենթակետերից հանել «Հայաստանի Հանրապետության մակերևութային ջրերի որակի նորմերը Հայաստանի Հանրապետության տարածքի 14 խոշոր գետային ավազանների գետերի ու գետերի առանձին հատվածների՝» բառերը, իսկ «ջրի որակի նորմերը» բառերից հետո լրացնել «՝ ըստ ֆիզիկաքիմիական տարրերի» բառերով,

ե. 12.1-ին ենթակետից հանել «Հայաստանի Հանրապետության մակերևութային ջրերի որակի նորմերը՝» բառերը, իսկ «ջրի որակի նորմերը» բառերից հետո լրացնել «՝ ըստ ֆիզիկաքիմիական տարրերի» բառերով,

զ. 3-12-րդ և 12.2-25-րդ ենթակետերով հաստատված հավելվածների վերնագրերից հանել «Հայաստանի Հանրապետության մակերևութային ջրերի որակի նորմերը Հայաստանի Հանրապետության տարածքի 14 խոշոր գետային ավազանների գետերի ու գետերի առանձին հատվածների՝» բառերը, իսկ «ջրի որակի նորմերը» բառերից հետո լրացնել «՝ ըստ ֆիզիկաքիմիական տարրերի» բառերով,

է. 12.1-ին ենթակետով հաստատված հավելվածի վերնագրից հանել «Հայաստանի Հանրապետության մակերևութային ջրերի որակի նորմերը՝» բառերը, իսկ «ջրի որակի նորմերը» բառերից հետո լրացնել «՝ ըստ ֆիզիկաքիմիական տարրերի» բառերով.

3) 2-րդ կետում «մակերևութային» բառը փոխարինել «մակերևութային ջրային մարմինների կարգավիճակների» բառերով.

4) 3-րդ կետի՝

ա. «բնապահպանության» բառը փոխարինել «շրջակա միջավայրի» բառերով,

բ. 1-ին ենթակետի «ջրերի որակի ապահովման» բառերը փոխարինել «ջրային մարմինների կարգավիճակների ջրի որակի» բառերով,

գ. 2-րդ ենթակետի «մակերևութային ջրերի որակի» բառերը փոխարինել «մակերևութային ջրային մարմինների կարգավիճակների ջրի որակի» բառերով, իսկ «էկոլոգիական նորմերը՝ ըստ» բառերը՝ «մակերևութային ջրային մարմինների կարգավիճակների ջրի որակի նորմերը՝ ըստ հիդրոմորֆոլոգիական, ֆիզիկաքիմիական, կենսաբանական տարրերի և» բառերով:

3. Որոշմամբ հաստատված N 1 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն N 1 հավելվածի:

4. Որոշմամբ հաստատված N 2 հավելվածի՝

1) վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ ՋՐԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՋՐԻ ՈՐԱԿԻ ՆՈՐՄԵՐԸ՝ ԸՍՏ ՖԻԶԻԿԱՔԻՄԻԱԿԱՆ ՏԱՐՐԵՐԻ».

2) աղյուսակի և որոշման NN 3-25 հավելվածների աղյուսակներում «Որակի դաս» բառերը փոխարինել «Մակերևութային ջրային մարմինների կարգավիճակ» բառերով:

5. Որոշումը լրացնել N 2.1 հավելվածով՝ համաձայն N 2 հավելվածի:

6. Որոշմամբ հաստատված NN 12.1, 12.2, 13, 15 և 16 հավելվածների «Արսեն, ընդհանուր» տողում «20», իսկ N 14 հավելվածում՝ «20.6» թվերը փոխարինել «10» թվով:

7. Որոշմամբ հաստատված ներքոնշյալ հավելվածների «Կապար, ընդհանուր» տողի 2-րդ սյունակում՝ N 3 հավելվածի «10.66», N 4 հավելվածի «10.7», N 5 հավելվածի «10.66», N 6 հավելվածի «10.9», N 7 հավելվածի «10.13», N 8 հավելվածի «10.5», N 9 հավելվածի «10.3», N 10 հավելվածի «10.17», N 11 հավելվածի «10.17», N 12 հավելվածի

«10.1», N 12.1 հավելվածի «10», N 12.2 հավելվածի «10.17», N 13 հավելվածի «10.17», N 14 հավելվածի «10.18», N 15 հավելվածի «10.15», N 16 հավելվածի «10.12», N 17 հավելվածի «10.14», N 18 հավելվածի «10.14», N 19 հավելվածի «10.14», N 20 հավելվածի «10.14», N 21 հավելվածի «11.5», N 22 հավելվածի «10.09», N 23 հավելվածի «10.1», N 24 հավելվածի «10.11», N 25 հավելվածի «10.18» թվերը փոխարինել «5» թվով:

8. Որոշմամբ հաստատված ներքոնշյալ հավելվածների «Մանգան, ընդհանուր» տողի 2-րդ սյունակում՝ N 3 հավելվածի «64», N 4 հավելվածի «52», N 5 հավելվածի «64», N 6 հավելվածի «52», N 7 հավելվածի «58» թվերը փոխարինել «50» թվով:

9. Որոշմամբ հաստատված ներքոնշյալ հավելվածների «Երկաթ, ընդհանուր» տողի 2-րդ սյունակում՝ N 3 հավելվածի «0.5», N 4 հավելվածի «0.3», N 5 հավելվածի «0.5», N 6 հավելվածի «0.3», N 7 հավելվածի «0.22», N 11 հավելվածի «0.3», N 12 հավելվածի «0.42», N 12.2 հավելվածի «0.36», N 13 հավելվածի «0.22», N 14 հավելվածի «0.24», N 15 հավելվածի «0.24», N 16 հավելվածի «0.8», N 17 հավելվածի «0.4», N 18 հավելվածի «0.4» թվերը փոխարինել «0.2» թվով:

10. Որոշմամբ հաստատված ներքոնշյալ հավելվածների «Այլումին, ընդհանուր» տողի 2-րդ սյունակում՝ N 3 հավելվածի «0.5», N 4 հավելվածի «0.5», N 5 հավելվածի «0.5», N 6 հավելվածի «1.6», N 7 հավելվածի «0.5», N 8 հավելվածի «0.5», N 11 հավելվածի «0.3», N 12 հավելվածի «0.28», N 12.2 հավելվածի «0.52», N 13 հավելվածի «0.25», N 16 հավելվածի «0.25», N 20 հավելվածի «0.28» թվերը փոխարինել «0.2» թվով:

11. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2025 թվականի հունվարի 1-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

29.06.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ